ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Ստուգիւ ներկայ աշխարհաւեր պատերազմի ատեն՝ Գերման գիտնականներ և մանաւորապէս քիմիագէտներ մինչև ցարդ անծանօթ մնացած շատ մը հնարքներ ստեղծեցին և գործադրութեան դրին՝ իրենց կայսեր ձեռնարկած Պատերազմի պիտոյքներու նպաստելու համար։ Քիմիագէտները ո՛չ միայն հեղձուցիչ, ապշեցուցիչ և արտասուեցուցիչ կազեր գտան և հակառակորդ զինուորները ջարդեցին, այլ նաև իրենց սովատանջ ժողովուրդներուն համար այնպիսի սննդական գոյացութիւններ հնարեցին՝ որոնք կերակրեղէններու և խոտահամբարներու տեղ կը փոխանակուին և մարդկանց և անասնոց սովածութիւնը կը չափաւորեն։ Նաև գիտնականօրէն նկատողութեան առնելով արհամարհելի նիւթեր կամ անօգուտ կարծուած գոյացութիւններ բոլորն ալ շահագործեցին և հայրենիքի պէտքերուն համապատասխանելու նպատակաւ՝ ամէն ինչ փորձեցին և յաջողեցան մեծապէս օգտաբերել։

Օրինակի համար, քիմիական իրենց նոր գիւտերու միջնորդութեամբ 14 *տեսակ վայրենի և անօգուտ բոյսեր ուտուելիք և սննդարար կանաչեղէններու կարգն անցուցին։ Հանճարեղ տարրաբաններ գտան այնպիսի համազօրներ իւղերու և ճարպերու՝ ջրածինի նոր կիրառութեան մեթոտներով և փոխարկումներով՝ որ այլևս Գերմանիան Շուէտէն, Նորուեկիայէն և Ամերիկայէն պէտք չունի ներմուծել իւղ և ճարպեղէն։*

Անգղիական արթուն հսկողութիւնը արգիլելով Ամերիկայէն Գերմանիա բամբակ ներմուծելն՝ որ բացարձակապէս հարկաւոր էր անծուխ վառօդ պատրաստելու, Գերման տարրախոյզներ ճգնեցան և յաջողեցան՝ փայտի կակղամասէն և թուղթի նեարդերէն բօրակատի խորշանիւթ (cellulose de nitrate) *պատրաստել որ ամենայն կերպով բամբակի տեղ կը ծառայէ։*

Բամբակ ներմուծուելէ առաջ՝ Եւրոպայի մէջ եղինճ կը գործածուէր։ Գերման գիտունները վերստին եղինճը շահագործել սկսան։ Իրենք ուռենիի կեղևանքն ալ հիւսելի նեարդներու կարգը անցուցին։ Իսկ մետաղագործութեան մէջ յիրաւի զարմանալի ստեղծագործութիւններ ըրին, ռազմամթերքի պատրաստութեան անհրաժեշտ պղինձի և արոյրի պակասը՝ անուշ երկաթի մէջ ոչինչ քանակութիւնք պղինձ և զինկ խառնելով՝ յաջողեցան նոր և դիմացկուն յարազօդ մը առաջ բերել։

Ելեկտրական ճարտարարուեստն ալ անակնկալ յառաջադիմութիւններ ըրաւ. փոխանակ պղնձի՝ պաղլեղածնի և մագնէսիոյ խառնուրդով շինեցին ելեկտրաբեր պարաններ։

Ձոյլ անագապղնձէ մեքենաներու տեղ, կը շինեն սնամէջ երկաթէ կամ պողպատէ գործիներ որոնք ապա պղնձով կը պատեն։

Հ. Ն.

ՃԱԽՐԱՆՔ

Ա՛հ ինծ Թռի՛չ մը տուէք.
Երկինքն ըստոր՝ ոտքիս տակ
Երկի՛ր փոխուած՝ Թող տեսնեմ, —
Ձիս՝ վեհապե՛տ մը դիտակ...

Ու փոխանակ վըրէժի՝
Սէր տարածեմ վեհօրէն,
Ատելութիւն հըրէշի
Կայծակներուն փոխարէն...

Ու յաւիտեան ըղձալից
Բերկրազըւարթ հաճոյքով
Ապրիմ յամայր անթախիծ
Անմահութեան խըննոյքով...

ՄԵՆԱՍԷՐ

digitised by A.R.A.R.@